

յարեաւ գերեզմանէն եւ ո՛չ նոյն օրուան յաջորդ գերեզրը: Եւ եթէ ըսեն որ այն գերեզրը երբ մեր Տէրը գերեզմանէն յարաթ օրուան գերեզրն էր, կը հակասեն Աւետարանիչներուն, որոնք միաշարաթի գերեզրը յարեաւ կ'ըսեն Քրիստոս եւ ոչ շարաթ օրուան գերեզրը: Այսպէս սովոր է Գիրքը՝ ցորեկէն առաջ եղած գերեզրը օրուան հաշուել: Այդպէս է նաեւ Առաքեալի խօսքին մէջ «գերեզր ցորեկ անդունդի մէջ եղայ»<sup>7</sup>: Գիրքասկալեայի<sup>8</sup> կամ Առաքելոց վարդապետութեան մէջ գրուած է. «Գլ. ԻԱ. «Այն գերեզրը, որ Երեքարթի օրուան կը յաջորդէ՝ չորեքարթի օրուան գերեզրն է, ինչպէս որ գրուած է՝ Եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդայն՝ օր մի»: Ուստի իրիկունը կը վերաբերի յաջորդ օրուան: Եւ դարձեալ Մար Յովհաննէս, որ վերեւ համարեցաւ թէ ցորեկը նախ է քան գերեզրը, Մատթէի Մեկնութեան մէջ, ճառ ՁԱ. կ'ըսէ թէ իւր ժամանակ կային ոմանք, որ իրիկունէ կը հաշուէին օրերը, ինչպէս սովոր են Ասորիները<sup>9</sup> եւ կը գրէ «Բաղարջակերաց առաջին օրէ»<sup>10</sup>, այն է Բաղարջակերպէն առաջ, վասն զի սովոր էին, ինչպէս շատերը, գերեզմանէն հաշուել օրերը. յիշեցնելով որ դասակարգ գառնը իրիկունը պիտի գոհէին<sup>11</sup>:

Վկայութիւն պէտք է բերենք (Ս. Գիրքէն) թէ գերեզրը նախ է քան ցորեկը: Մովսէս Երբայեցիներուն կ'ըսէ. «Բոլոր Իսրայէլ եօթ օր Բաղարջ պիտի ուտէ, եւ իրիկունէ իրիկուն պիտի ուտէ զայն»<sup>12</sup>: (Հնգամասեանի) Երկրորդ գրքին մէջ. «Ամսոյն իննին՝ իրիկունը եւ իրիկունէ իրիկուն շարաթ պիտի պահէք»<sup>13</sup>: Յետու որդի Նաւեայ. «Եւ բնակեցան Իսրայէլի որդիները Գաղղաղայի մէջ եւ պասէք կատարեցին առաջին ամսոյն 14ին

Երեքովի դաշար»<sup>14</sup>: Սամուէլի գրքին մէջ. «Եւ խօսեցաւ ժողովուրդը Դաւթի, որ ուտէ, մինչդեռ օր կար»<sup>15</sup>: Իսկ Դաւթի, Սաղմ. ԾԵ. «Իրիկուն, առաւ եւ կէսօր»<sup>16</sup>: Յովհաննէս Աւետարանիչը կ'ըսէ. «Եւ գրին հոն Յիսուսը դադարէն մէջ վասն զի շարաթը կը մանէր»<sup>17</sup>: Պիղատոսի կինը իւր մարդուն (լուր) գրկեց թէ «Այսօր երազիս մէջ անոր համար շատ կրեցի»<sup>18</sup>: Ուստի գիտէր թէ անցնող գերեզրը (յաջորդ) օրուան կը վերաբերի: Մարկոս կ'ըսէ. «Հսկեցէք վասն զի չէք գիտեր երբ տանուակէրը կու գայ, իրիկունը թէ կէս գերեզրին թէ հաւաթիսին թէ առաւ»<sup>19</sup>:

Ապացուցանելն ետք թէ գերեզրը նախ է քան ցորեկը կամ խաւարը քան լոյսը, տեսնենք թէ ո՞ր իրիկունը լուսողոյն է պահել՝ չորեքարթի եւ ուրբաթ լուսանալուն թէ լրանալուն: Նախ ըսենք որ այս պահքը առաքեալներէն չսահմանուեցաւ, ուստի շատ հին չէ: Յոյները եւ Հայերը ցորեկը գերեզմանէն առաջ գնելով կը կարծեն թէ առաւ կամ օրուան սկիզբէն պէտք է պահել: Ասորիները քննելով Գիրքը եւ տեսնելով որ գերեզրը նախ է քան ցորեկը, ինչպէս վերեւ ցուցուցինք, եւ խաւարը նախ քան լոյսը, ինչպէս բոլոր լեզուները կը վկայեն, կ'ըսեն թէ իրիկունէ պէտք է պահել: Եթէ սակայն Երեքարթի եւ հինգարթի օրերուն կէսօրէն ետք ուտիքի կերակուր չեն ճաշակեր (Հայերը եւ Յոյները), թերեւս ճշմարիտ ըլլայ անոնց բռնած սովորութիւնը: Բայց Երեքարթի եւ հինգարթի օրերը արեւը դեռ մար չմտած<sup>20</sup> ուտիք կ'ուտեն. արեւը մտնելէն ետք ստամոքսին համար ի՞նչ պահանջք կայ ուտելու կամ պահելու: Արդ իրիկունն եւ գերեզմանն առաջութեան մէջ Ասորիները ուղիղ են.

<sup>7</sup> Բ. Կորնթ. ԺԱ., 25. գտիւ եւ գերեզր յանդունդս տոնապահաց:  
<sup>8</sup> Didascalia Apost., ԳԼ. 21. հրտ. Gibson:  
<sup>9</sup> Տեղիքս գանց կ'առնէ Միդանս:  
<sup>10</sup> Մատթ. ԻԶ., 7. եւ յառաջնում աւուր բարձրակերացն:  
<sup>11</sup> Patr. Gr., CVIII, 729. «Առաջին օր Բաղարջակերաց՝ յառաջ քան զԲաղարջակերաց օրէն տակ. քանզի սովոր էին յերեկորեայ թուել, եւ զայն յիշել, զի յերեկորեայ գերեզր էր գառն Չառակին»: Յովհ. Ասկերեանի, Մեկն. Մատթ. ՁԱ., Բ. հատ., էջ 96:  
<sup>12</sup> Ելք. ԺԲ., 15. գեւթն օր բաղարջ ուտիցէք. ԺԲ., 18. ի սկսանել չորեքատասներորդի աւուր ամսոյն առաջնոյ յերեկորեայ բաղարջ ուտիցէք:  
<sup>13</sup> Ղեւտ. ԻԳ., 32. շարաթ շարաթուց եղիցի ձեզ. եւ խոնարհեցուաջիք զանձինս ձեր յիններորդի օրէ ամսեանն յերեկորեայ մինչեւ ցերեկոյն շարաթուցուաջիք զշարաթս ձեր:  
<sup>14</sup> Յեսու. Ե., 10. եւ կոչեաց զանուն տեղոյն այնորիկ Գաղղաղա մինչեւ ցարթօր. եւ անդ բանակեցան որդիքն Իսրայէլի, եւ արարին որդիքն Իսրայէլի զգատիկն ի չորեքատասներորդում աւուր ամսոյն յերեկորեայ, յարեւելից Երեքովի ի դաշտի անդ:  
<sup>15</sup> Բ. Թադ. Գ., 35. եւ եկն ամենայն ժողովուրդն տալ ընթրիս Դաւթի մինչդեռ աւուր կայր:  
<sup>16</sup> Սաղմ. ԾԳ., 18. յերեկոյս ի վաղորդայն ի հաւարակ աւուր:  
<sup>17</sup> Յովհ. ԺԳ., 42. անդ վասն շարաթուն Հրէից, զի մօտ էր գերեզմանն, եղին զՅիսուս:  
<sup>18</sup> Մատթ. ԻԷ., 19. զի թողուն անցք անցին ընդ իս այսօր յանուրջս վասն նորս:  
<sup>19</sup> Մարկ. ԺԳ., 35. արդ արթուն կայցէք, զի ոչ գիտէք երբ տանն զայցէ. յերեկորեայ եթէ ի մէջ գերեզրի, եթէ ի հաւաթուսի, եթէ ընդ առաւօտս:  
<sup>20</sup> Այսպէս Ասորիք՝ յաշար յաշար, իսկ Միդանս կը թարգմանէ «մինչեւ մար մտնելէն վերջ» (էջ 19):

(բայց) առաւօտէ առաւօտ պահելը ճշմարտութեան նմանութիւն ունի: (Ասորիներս) Երեքարթի ուտիք կ'ուտենք եւ չորեքարթի մինչեւ իրիկուն կը պահենք եւ յետոյ դարձեալ ուտիք կ'ուտենք. նոյնպէս հինգարթի ուտիք կ'ուտենք, նմանապէս ուրբաթ ծոմ կը պահենք մինչեւ իրիկուն (եւ յետոյ) ուտիք կ'ուտենք. բայց ամբողջ շարաթ օրը ուտիք կ'ուտենք: Կը պահենք ուրբաթ չորեքարթի եւ ուրբաթ կերակրոյ (= ծոմ) եւ ուտիք, եւ հինգարթի ու շարաթ լուսանալու իրիկունը ուտիք կ'ուտենք. երբ չորեքարթի եւ ուրբաթ կը պահենք, այդ օրերու կերակուրները պէտք է ուտենք:

Մեր մէջ կան բաներուն մարդիկ, որ չեն թողուր մեր ժողովուրդին հին սովորութիւն մը լքել: Արդ եթէ Հայերը եւ Յոյները հաւանին մեզի թէ գերեզրը նախ է քան ցորեկը, ինչպէս կը համարին վարդապետները եւ մենք անոնց հետ, ի՞նչ վրաս կայ երբ մենք ալ արդարացինք զիրենք, որ ուրբաթ իրիկուն ուտեն այն բաները, զորոնք մենք շարաթ լուսանալուն կ'ուտենք:

Ասոր սակայն կ'առարկեն Հայերը. Եթէ գերեզրը նախ է քան ցորեկը, դուք իրիկունը եւ գերեզրը ուտելէն ետք կը մասնակցիք (Հաղորդութեան) Որհնուրդին:

Անոնց կը պատասխանենք. Մեսիան եւ աշակերտները նախ կերան եւ յետոյ հաղորդուեցան Որհնուրդին: Դուք գիտցէք որ իրիկուն կերակրոյ եւ Որհնուրդի մերձեակում միջեւ կերածը մարսելու եւ քանալու ժամանակամիջոց մը կայ, եւ այդ միջոցը կը բռնէ տասնութէկ ժամ: Կէս գերեզման ետք եթէ ուտէինք՝ առարկութեան տեղ կար. բայց այս առարկութեան տեղք եւ հասկցէք, որ Յարութեան իրիկունն ու գերեզրը, ինչպէս նաեւ միւս տօներուն՝ ոչ թէ տօնին կ'աղօթէք, այլ տօնի նախօրեակին. (այլապէս իմաստէ) զուրկ պիտի ըլլային Երեկոյեան եւ Գիշերային ժամերը Կիրակի եւ տօներէն առաջ, բայց ի Առաւօտեան ժամէն եւ պատարագի աղօթքէն:

Ինչպէս (ստոյգ է) թէ համ չկայ սնդուրի հիւթին մէջ<sup>21</sup>, այնպէս ցուցուցինք թէ գերեզրը ցորեկէն առաջ է: Յուցնենք դեռ որ գերեզրը ցորեկէն առաջ գնելով զանոնք իրարու

<sup>21</sup> Տեղիքս Յորէն է. Յոր. Զ., 6. այսպէս կ'ըսէ Ասորիս հետեւելով Երբայեցիքն բնագրին. մինչ հայր եօթասնից ընթերցուած կը ներկայացնէ. «Կամ զուցէ՞ համ ի բանս ունայնս»: Միդանս առարկան առած մը կը կարծէ խօսքս (էջ 20):

մէջ խառն չենք համարիր, երբ կը լսենք Դաւթի, որ կ'ըսէ. «Արեւը օրուան տիրելու համար». եւ Պաւղոս որ կը գոչը. «Ի՞նչ իշխանութիւն է լոյսի խաւարի հետ»<sup>22</sup>: Եւ եթէ իրիկունը առաւօտէն, գերեզրը ցորեկէն առաջ չէ՞ ի՞նչու Կիրակի եւ տօներու լուսանալու գերեզրը կը դադարեցնենք զործել. եւ տօներէն առաջ ի՞նչու կը պահէք: Դարձեալ առաքեալները չպատուիրեցին մեզի պահել չորեքարթի եւ ուրբաթ իրիկունը, հասպա նոյն օրը, բայց օրը քսանուչորս ժամէ կը բաղկանայ: Այս պատճառաւ մենք իրիկունէ կը պահենք, ինչպէս դուք բոլոր տօներու նախօրեակին կը պահէք: Դարձեալ գրուած է թէ մեր Տէրը իւր աշակերտներուն հետ իրիկունը կերաւ պասեքը, եւ հրեաները մինչեւ առաւ ծոմ կը պահեն Որդին խաչելու համար: Արդ Ասորիները իրիկունը կ'ուտեն, ինչպէս մեր Տէրը եւ աշակերտները իրիկունը դատուելը կերան. իսկ Յոյները եւ Հայերը առաւ կը սկսին ուտիք ուտելու խաչահանուներուն պէս, որ խաչելէն ետք դատուելի միւր կերան:

Եթէ մէկը ըստ սովորութեան պահէ կամ ուտէ այդ իրիկունները, կամ աղիտութեամբ չողահէ, բան մը չի շահիր, վասն զի առաքեալը կ'ըսէ «Եթէ ուտենք չենք աւելնար, եւ եթէ չուտենք՝ չենք պակսիր»<sup>23</sup>: Մենք սակայն ցուցուցինք Ասորիներու ճշմարտուկայն ցուցուցինք Ասորիներու ճշմարտութիւնը, եւ լաւ պիտի ըլլար միւս ժողովուրդները այս պահքին բերել երբ հետեւին մեզ թէ գերեզրը նախ է: Եւ այսչափս բաւական է:

(Շարունակելի): Է. Պ. ԵՍԱՊՈՒՆՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ Վ. ԲԱՂԻՇԵՑԻ (1475—1550)

Հին Հայաստանի Սախոյ ձոր (ըստ այլոց՝ Բյունուհայ) գաւառին բերդաքաղաքն էր Բագնի, կառուցուած այլ եւ այլ ձորարբերաններ միացնող կէտի մը վրայ: Թէպէտ ձորաշխարհի մը մէջ հիմնուած է քաղաքս, բայց կ'իշխէ բնութեան սքանչելի տեսարանի մը. ամէն կողմէն ջրաբերի, ճոխ է այդատաննելով: Երեք գետակ կը հոսէ քաղաքս, առա-

<sup>22</sup> Բ. Կորնթ. Զ., 15. եւ կամ զի՞նչ հաւատարմութիւն է լուսոյ ընդ խաւարի:  
<sup>23</sup> Ա. Կորնթ. Բ., 8. ոչ եթէ չուտենք՝ պակաս մը ինչ, եւ ոչ եթէ ուտենք՝ առաւելումք ինչ:

Ջինը կ'իջնայ Գոմաց ձորէն, անցնելով Ամբրտուրի վանքի առջեւէն. երկրորդը՝ Ծապուկորի ձորէն եւ կը միանայ առաջնոյն բերդին առջեւ. իսկ երրորդը՝ Աւելու ձորէն. երեքն ալ ապա կ'ընդլատնուին Խնդրակատար վանքին առջեւ եւ գետացած կը հոսեն դէպի հարաւակողմ<sup>1</sup>:

Բնակչութիւնը ի հնուն մեծամասնութեամբ հայ էր. կար ասորի փոքրամասնութիւն մ'ալ. իսկ չըջակայքը՝ քուրդ ցեղեր:

Եպիսկոպոսանիստ քաղաք էր Բաղէշ. ունէր չորս հինաւուրց եկեղեցիներ՝ Ս. Կիրակոս, Ս. Սարգիս, Հինգխորան եւ Ս. Գէորգ. ասոնք գոյութիւն ունէին արդէն ժ.Ն. դարուն. հասած են մեղի ձեռագիրներ, գրուած այս եկեղեցիներու հովանոյն տակ: Հարուստ եղած է Բաղէշ նաեւ վանքերով, սկսեալ ժ.Ն. դարէն կը յիշուին հոս յատկապէս հետեւեալ չորս վանքերը, առաջինը յանուն Յովհաննու Կարապետի՝ հիմնուած Ամբրտուրի թաղին մէջ, որ անուանի եղաւ մասնաւորապէս ժ.Ն. դարու երկրորդ կէսին, Վարդան Վ. Բաղիշեցոյ օրով: Երկրորդը կը գտնուի Ամբրտուրէն կէս ժամ հեռաւորութեան՝ Գոմաց ձորին մէջ, յանուն Ս. Աստուածածնի, որ կը կոչուի Գոմաց Ս. Աստուածածնի վանք: Երրորդն է Աւելու Ս. Աստուածածնի վանքը, համանուն ձորին մէջ: Իսկ չորրորդը՝ Խնդրակատար Ս. Աստուածածնի վանք, կառուցուած է քաղաքէն իր երկու ժամ հեռաւորութեան՝ Ամպ գիւղին դիմաց, որ առաջին երեք վանքերէն աւելի մեծ է եւ մինչեւ վերջերս աւելի խնամով պահուած: Աւանդութեան համաձայն անոր հիմնադիրն եղած է Թաղէնու առաքեալ<sup>2</sup>:

Խնդրակատար Ս. Աստուածածնի անուանի հանդիսացաւ ի մասնաւորի սկսեալ 1513է, երբ նորոգեց զայն Ներսէս Վ. Մատաղ, ընդարձակեց եւ հողերը զպրանոցի վերածեց: Դար մը շարունակ եղաւ այն հայ մտաւոր կեանքի վառարան, ուսկից ելան հայ եկեղեցոյ համար նշանաւոր քարոզիչ վարդապետներ, գրագէտ եւ գրասէր: Նկատի առ-

<sup>1</sup> Բաղէշ քաղաքի մասին տե՛ս Հ. Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս. Վենետիկ 1864, էջ 239—246: Հ. Հիւրճեան, Հին Հայոց տեղւոյ անուններ, Վիեննա 1907, էջ 187—188:

<sup>2</sup> Խնդրակատար Ս. Աստուածածնի վանքի պատմութիւնը, գրուած 1702ին եւ շարունակուած Վարդան վարդապետէ, հրատարակած է F. Macler, Notre-Dame de Bitlis, Բանասէր 1905, էջ 288—303: Նոյնը գաղղիերէն թարգմանութեամբ՝ Journal asiatique, 1915, II, p. 400 են:

նելով այս պարագան, ի յաջորդս պիտի թուեմ այն բոլոր վարդապետները, որոնք ծնան այս դպրոցէն եւ քարոզչութեամբ, գրասիրութեամբ եւ գրականութեամբ վառ պահեցին հայ ժողովրդեան մէջ գիտութեան ջահը:

Արդէն ժ.Ն. դարու առաջին կէսին հանած էր Բաղէշ գիտուն եւ գրականագէտ անձնաւորութիւններ, ինչպէս Առաքել Բաղիշեցի մը եւ Մկրտիչ Նաղաշ մը, որոնք Բաղէշի մերձակայ Պոռ գիւղն ունին իրենց ծննդավայր: Ուրիշ առթի թողով պսոնց կեանքն եւ գրական գործունէութիւնը դժեւ, այս տեղ իմ ուշադրութիւնս պիտի ուղղեմ Բաղիշեցի այն անձնաւորութեանց վրայ, որոնք ծաղկեցան ժ.Չ. եւ ժ.Ի. դարերուն:

Կարապետ վարդապետ Բաղիշեցի, ինչպէս յորջորջումը ցոյց կու տայ, ծնած է Բաղէշ, իբր 1475ին: Հօր անունն էր Ստեփանոս, եւ մօրը՝ Ալամշահ: Կը յիշէ նա ինքնին իւր եղբայրն ոսկերիչ Աստուածատուր, որ «անմեղ նահատակեալ եղեւ ի ձեռն հարամկաց ի յանապատն Մշոյ», եւ եղբորորդին, նոյնպէս ոսկերիչ՝ Ծահղուբաթ:

1496ին կը պատահինք իրեն առաջին անգամ, երբ իբրեւ արեղայ Մշոյ Առաքելոց վանքին՝ կը կազմէ 1325ին օրինակուած եւ կազմաւորեց եղած Աւետարան մը: Յիշատակարանին մէջ կը գրէ Կարապետ արեղայ. «Ի վերջին դարիս եւ յետնում ժամանակիս... յորում է թվականութիւն մեր ԶԽՆ. առաջնորդք սուրբ ուխտիս Ղազարու վանացս տէր Եղիայ արհիպիսկոպոս եւ տէր Թորոս արհիպիսկոպոս եւ տէր Ղազար վարդապետն տեսին զուրբ Աւետարանս զի յոյժ հնացեալ էր կապն եւ էր առանց արծաթոյ եւ անտես եւ անվայելուչ զօրով արտաքուստ ի տեսողացն. վասն որոյ ետուն վերստին կազմել զսա եւ արծաթապատ զարդարել որպէս եւ տեսանէք...: Արդ յիշեցէք ի Քրիստոս զհաւատարիմ եւ զհամեստ կանայքս զԶիշաքն եւ զՈւռուճէն, որ սակաւ ինչ արծաթով աւգնական եղին ի զարդ Աւետարանիս...: Նաեւ... զտուածանուն Կարապետ արեղայս զԲաղիշեցի՝ զվերջին կազմողս յիշեցէք... (եւ) զՄարգարոյ քահանայն (եւ) զծնողսն իւր»<sup>3</sup>:

Կարապետ արեղայ իւր եղբոր հետ Տարօն եկած էր հաւանօրէն քաղաքական հորի-

<sup>3</sup> Յիշատակարան «Ղիճ Աւետարանի» Առաքելոց վանաց Մշոյ:

գոնի-պղտորութեան պատճառաւ. ճիշդ այս տարի Չաքարիա գրիչ, որ յԱւելու վանս յառաջնորդութեան Յակոբ եպիսկոպոսին Աւետարան մը կ'օրինակէր, «ի դանութեան արդին Նետողաց Ըստում բէկին», ժամանակն «դառն եւ չար» կը ներկայացնէր, երբ «ազգն Նետողաց», «բռնացեր են ի վերայ Հայոց ազգիս»<sup>4</sup>:

1502ին գործով մը կ'իջնայ Կարապետ արեղայ Միջագետք, Բերդաձոր գիւղը, ուր կ'օրինակէ Մաշտոց մը: Յիշատակարանին մէջ կ'արձանագրէ. «Արդ գրեցաւ սուրբ գիրքս որ կոչի Մաշտոց, յերկիրս Միջագետքս ի յաստուածապահ եւ յանուանի գեղս տաց ի յաստուածապահ եւ յանուանի զեղս, որ կոչի Բերդաձոր եւ անուանի Բէկրիաճուկ, ձեռամբ անարժան եւ անպիտան մեղաւոր եւ փծուն գրչի Կարապետ սուտանուն արեղայի Բաղիշեցոյ, որ պատահամբ հանդիպեցայ աստ եւ սկսեալ կատարեցի կամաւր եւ աջողութեամբ ամենակալին Աստուծոյ: ... Արդ գրեցաւ սուրբ գիրքս ի թվականիս Հայոց ԶԾԱ, ի դառն եւ յանարարի ժամանակիս, որ յամենայն կողմանց նեղիմք յանարարինց»: Կը խնդրէ յիշել «նաեւ զիս զանիմաստ գրիչս զԿարապետ եւ զծնաւզսն իմ զՍտեփաննոս եւ զԱլամշայ. եւ զգովելի եւ զհոգեակաւոր եղբայրն իմ զոսկերիչ Աստուածատուրն, որ անմեղ նահատակեալ եղեւ ի ձեռն հարամկաց ի յանապատն Մշոյ եւ թողին սուգ անմխիթար. եւ զեղբորորդեակն իմ զԾահղուբաթ ոսկերիչն ամենայն արեան մերձաւորաւք»<sup>5</sup>:

1511ին ի Վան Չաքարիա արեղայ կ'օրինակէ Աւետարան մը: Աւետարանիս սկիզբը գտնուած Մատթէի նկարի տակ կը կարդաւ. «Կարապետ արեղայ արեղայութիւնս. «զԿարապետ արեղայի յիշեալ ի Տէր». յիշատակագրութիւնս մանրանկարէն է: Հանդիպած է Կարապետ Բաղիշեցի այս թուին ի Վան եւ նկարագրագած Չաքարիայի օրինակութիւնը: Բոլորովին տարբեր անձ է Կարապետ արեղայ ի Վարազ, որմէ է Յիշատակագրութիւնս. «Ի ԶԿԻ թվին ||| (ե՞ս) Կարապետ սուտանուն արեղայս եւ սիրական եղբայրն մեր տէր Յոնն արեղայս եւ զարանքն Վարազս սուրբ Յոնն արեղայս եւ սիրական եղբայրն մեր տէր Յոնն արեղայս եւ սիրական եղբայրն մեր տէր Յոնն արեղայս եւ սիրական եղբայրն մեր տէր Յոնն արեղայս»<sup>6</sup>: Եւ Աստուած զինքն խաղաղութեամբ մեաց: Եւ Աստուած զինքն խաղաղութեամբ պահէ ընդ երկայն աւուրս. ամէն: Եւ ի հայ-

<sup>4</sup> Թորոս Աղբար, Բ., 426:  
<sup>5</sup> Երեւան, Պետ. Թանգարան, Թ. 456:

րապետութեան տեսնն Սարգսի որ բազում երախտիս ունի ի վերայ մեր քան զհային առաւել. արարելն Աստուած խաղաղական կենալք պահէ. ամէն»<sup>6</sup>: Այս Վարազեցի Կարապետն է նաեւ հետեւեալ յիշատակագրութիւնս. «Ի թվականիս Հայոց ի ԶԶ եւ Կարապետ սպասաւոր սուրբ ուխտիս Վարազայ եկի ի Բաղէշ քաղաք եւ տեսայ զգիրքս քաղաւածու երգոյն Սաղմոսի առ խաւճա Միջայէլին եւ խնդրեցի ի նմանէ» են:<sup>7</sup>

Տարբեր անձ է նաեւ Կարապետ Վ. Չամալ Վարազեցի, որ ծաղկեցաւ ժ.Չ. դարու երկրորդ կէսին:

1513ին կ'օրինակէ Կարապետ Բաղիշեցի Սաղմոսարան մը Մշոյ արեւմտեան կողմը, չորս ժամու հեռաւորութեան վրայ կառուցուած Եղբորուտի վանքը<sup>8</sup> եւ կ'աւարտէ նոյն տարւոյն Յունիս 30ին<sup>9</sup>:

1526ին դարձեալ կը գտնենք զինքը Տարօն, Առաքելոց վանքը, ուր Յայմաւուրք մը կ'օրինակէ ի խնդրոյ Սիոն տանուտիրոջ եւ ի վայելումս սպասաւորաց Ս. Առաքելոցն: Այս ձեռագիրը ապա Մարտիրոս արեղայ, «որ եւ եմ ես ի դաւառէն Տարօնոյ վարժեալ ի դուռն Ս. Կարապետին», կը ծաղկէ եւ կը գրէ յիշատակարանը, ուր կ'ըսուի, թէ գրուած է բնագիրը «ձեռամբ գրչի Կարապետ կրօնաւորի»: Կը խնդրուի «յիշել ի Տէր գառալնորդ սուրբ ուխտիս զԹաղէնոս եպիսկոպոսն եւ զերջանիկ բարունապետն մեր զԹորոս, եւ զայլ անունսն եւ զայլքն ամենայն, որք զաէր Հայրապետն եւ զայլքն ամենայն», եւ ժամգրակ եղին ի ծաղկելն եւ ի կապելն», եւ մասնաւորապէս «զգծող սորա զտէր Կարապետ Բաղիշեցի, որ բազում աշխատութեամբ գրեաց»<sup>10</sup>:

Տարօնոյ Առաքելոց վանքի արեղան եւ գրիչը այս թուականէն ետք ժամանակ մը կ'անհետանայ հրապարակէն. գոնէ ոչ ինքը եւ ոչ ժամանակակիցը չեն ընդ իր մասին յիշատակութիւն: Բայց ունինք իրմէ ընդարձակ տաղ մը 1540 տարւոյն գրուած, ուր կը ներկայացնէ ինք զինք «Կարապետ Վարդապետ»: Ասկէ կը տեսնուի թէ Կարապետ արեղան բարձրացած է վարդապետական աստիճանին: Ուրիշ յիշատակագիր մը, Աս-

<sup>6</sup> Էջմ. 2603, 1ա (Ն. Լամբրոնացոյ Մեկն. Առաւկաց):  
<sup>7</sup> Յ. Թոփճեան, Յուցակ Դաղեան Խաչիկ վարդապետի հաւաքման, էջ 62:  
<sup>8</sup> Սարգիսեան, անդ, էջ 236:  
<sup>9</sup> Յիշատակարանս պիտի հրատարակեմ վարդապետութեամբ:  
<sup>10</sup> Յայմաւուրք Առաքելոց վանքի ի Մոն:

տուածատուր արեղայ 1547ին, կը յայտնէ մեզ թէ Կարապետ վարդապետ ձեռնադրուած է նաեւ արքեպիսկոպոս եւ կարգուած Առաքելոց վանքին առաջնորդ, հաւանօրէն ի կենդանութեան ծերունի թաղէոս արքեպիսկոպոսին, որուն որդեգիրն եղած է եւ յետ մահուն կտակակատարը: Կը գրէ Աստուածատուր գրիչ իր օրինակած Սաղմոսարանին յիշատակարանին մէջ, «գրեցաւ ի խնդրոյ բազմերջանիկ... տէր թաղէոսին (որդւոյ Շարաֆին եւ Մինա խաթունին)... ի թվին Հայոց ՋՂԶ... յաստուածարնակ ուխտս Ղազարու, ընդ հովանեաւ սուրբ Առաքելոցս եւ Տիրամայր սուրբ Աստուածածնին եւ Գրիգոր սուրբ Լուսաւորչին... յառաջնորդութեան սուրբ ուխտիս արքեպիսկոպոսացն տեառն Կարապետի (որ էր որդեգիր եւ կտակակատար տէր թաղէոս արքեպիսկոպոսին) եւ տեառն Սարգսին, տեառն Հայրապետին եւ տեառն Առաքելին եւ այլ միաբան եղբարցն»<sup>11</sup>:

Թէպէտ Աստուածատուր գրիչ չի շեշտեր, թէ Կարապետ արքեպիսկոպոսն եւ առաջնորդն Բաղիշեցին ըլլայ, բայց ամէն պարզայ կը մղէ զմեզ նոյնացնելու Կ. Բաղիշեցին Առաքելոց վանքի համանուն առաջնորդին հետ:

Հաւանօրէն 1547էն ոչ շատ տարիներ ետքը (1550ին) կնքից Կարապետ արքեպիսկոպոս իւր մահկանացուն:

Կարապետ Վ. Բաղիշեցի ներկայացաւ մեզի նախ արեղայ գրիչ, որ իւր գործունէութեան ասպարէզն ունէր Մշոյ Առաքելոց վանքին մէջ. վանքս մտած էր իրրեւ որդեգիր թաղէոս արքեպիսկոպոսի եւ առաջնորդի. եւ անոր կենդանութեան ընտրուած փոխանորդ առաջնորդութեան:

Բացի գրչութեան արուեստէ հմուտ էր անիկա մանրանկարչական արուեստի եւ կազմարարութեան: Իր պատմական յիշատակարանը, գրուած 1513ին, ցոյց կու տայ, թէ անիկա վարժ էր նաեւ հիւսելու չափական գրութիւններ. այս պարզան կը գրդէ զմեզ նոյնացնելու գինքը տաղասաց Բաղիշեցի Կարապետին հետ, եւ իրեն վերագրելու այն ամէն տաղերն ու զանձերը, որոնք հասած են մեզի յանուն Կարապետ Բաղիշեցոյ: Պէտք է շփոթել սակայն այս Կարապետ Բաղիշեցին այն Կարապետին հետ, որ թէպէտ հայրենօք Փարիսնոցի էր, բայց սովոր էր կոչել ինք

զինքը Բաղիշեցի († 1623): Անշուշտ ելած են Բաղիշեցի ուրիշ Կարապետներ ալ, բայց խնդրական կը մնայ, թէ օտուած ըլլան անոնք ալ տաղաչափելու շնորհքով:

Կը թուեմ այս տեղ Կարապետ Բաղիշեցոյ ինձ ծանօթ զանձերն ու տաղերը, որոնք կ'երեւցնեն շնորհք արտայայտելու մտքեր եւ զգածուններ եւ գրի առնելու զանոնք հաճելի սձով, գողտրիկ շէնքով:

1. Տաղ Արարածոց ասացեալ ի Կարապետ:

Եկայք Աղամայ որդիք,  
արարածք ամէն միաբան,  
Օրհնեմք զարարիչն Աստուած  
որ ստեղծեաց զէակս ամենայն...:

Ձեռագիրք՝ էջմ. 33, 131ա (Ժէ): 527, 148բ (1664): 1428, 178ա (1642. սկ. պակաս): 1677, 52բ: Երեւան, Պետ. Թանգարան, 618, 29բ (1640. պակասաւոր): 855, 94ա (Ժէ. պակասաւոր): Վիեննա, Մխիթ. Մատ. 684, 64բ (Ժգ): 745, 94բ—101բ (Ժէ.): Վենետիկ Մխիթ. Մատ. 243, 69բ (Ժէ. ցուցակ՝ 634): Ուրիշ մը համար. Բազմալէպ, 1897, էջ 425:

Հրատարակուած՝ Բազմալէպ, 1880, էջ 97—100 (թ. 243էն):

Կարապետ վարդապետ տաղս գրած է Հայոց ՋՁԹ, այն է փրկչական 1540 թուին: Վենետիկի Մխիթարեանց օրինակին ընթերցուածը «Ռ եւ ԺԴ», այն է 1565 առանց տարակուսի գրչութեան եւ ոչ տաղին յօրինման տարին է: Կարապետ վարդապետ զժրախտաբար իւր ծննդավայրը չէ յիշած, նաեւ ժամանակակից գրիչք հող չեն տարած մտնանիւ ընել զայն: Ինձ կը թուի, սակայն, թէ Բաղիշեցի էր անիկա, եւ այս շրջանէս մեզի ծանօթ Բաղիշեցի Կարապետ արեղայի եւ Տարօնի արքեպիսկոպոսի հետ նոյն:

Տաղիս մէջ կը գծէ երգիչը «աշխարհացոյց» մը, եւ կը պարզէ իւր ունկնդիրներու առջև աշխարհի երեք մասերու մէջ ընկող ազգերն ու անոնց նշանաւոր քաղաքները: Այս բովանդակութիւնը գեղեցիկ կերպով վերահանած է գրչագիր մը, որ այսպէս խորագրած է տաղս. «Ի Կարապետ վարդապետէ արարեալ ոտանաւոր ի վերայ ամենայն աշխարհի, զոր եւ Նոյ յետ ջրհեղեղին արար երեք մասունս եւ բաժանեաց ի վերայ երկից որդւոցն

իւրոց»<sup>12</sup>: Այս իմաստով ալ ուրիշներ կ'ըսած են «աշխարհացոյց համառօտ բանիւք»:

Ինչ ինչ ձեռագիրներու մէջ գուրս ինչպիսի տաղիս սկզբնաւորութիւնը. այսպիսի ձեռագրէ ծագած են էջմիածնի թ. 527 եւ 1677, ուր կը պակսին առաջին 1—14 տողերը: Իսկ տող 53—164 իրրեւ առանձին տաղ, առանց հեղինակի անուան, մուտ գտած է Տաղարաններու մէջ. այսպէս՝ «Ողբ ի վերայ Հայոց թագաւորաց եւ իշխանաց» խորագրով եւ սկզբնաւորութեամբ՝

Սուտ եւ անցաւոր աշխարհ,  
ո՛ւր են մեր իշխանքն ամենայն...:

էջմ. Գէորգեան բաժին, թ. 281, թղ. 134ա—բ = Աճառեան, Տաղարան, 131ա, 424: Բէշիշեան, Յուլ. Զմմառի, 22, 326ա: Պարիս, Աղգ. Մատ. 283, թղ. 169ա: Վենետիկ, Մխիթ. Մատ. 1371: Ասկէ հրատարակած Ա. Չոպանեան, Հայ էջեր, էջ 13:

Տաղիս 47—88 տողերը, Գաբրիէլ գրչին ընդլայնուած, ունինք Վիեննայի Աղգային Մատենադարանի թ. 22 հայերէն ձեռագրին մէջ, ամբողջութեամբ հրատարակուած Հ. Յ. Տաշեանէ, Յուլ. Զմմառի, էջ 32—33:

Կարապետ վարդապետի այս տաղը պիտի հրատարակեմ վարը ամբողջութեամբ:

2. Ողբ ի վերայ արշաւանաց իսրայէլ շահին: Գրուածքս իրրեւ յիշատակարան կցած է Կարապետ Բաղիշեցի իւր 1513ին օրինակած Սաղմոսարանին մէջ, գրուած Եղրգուտի վանքին մէջ: Ձեռագիրը կը գրւունուի այժմ յիսկորեալ (Մաղրիտ): Յիշատակարանիս արտագրութիւնը կը պարտինք հայագէտ F. Maclerի, որ հրատարակեց զայն ի թերթին Revue des Etudes Arméniennes, 1 (1920), 94—101: Նոյնը կ'արտատպենք ստորեւ, ինչ ինչ ուղղումներով:

3. Գանձ Գրիգորի Աստուածարանին ի Կարապետ Բաղիշեցոյ:

Կենդանարար որդիդ միածին,  
Առեր մարմին յարգանդի կուսին,  
Վասն Աղամայ քո նախաստեղծին,  
Որ մերկացաւ զփառս առաջին...:  
Վ. Եկեղեցոյս եւ ժողովրդեան  
Լեր օգնական յաւուր նեղութեան:

Տնակապ գրերը՝ ԿԱՐԱՊԵՏ (վերջին տան) ԲԱՂԻՇԵՑԻ:

<sup>12</sup> Տեսած է ձեռագիրս Ղ. Վ. Փիլղոսյանի մեծ. Դիւան Հայոց Պատմութեան. գիրք Ժ., էջ 500:

Ձեռագիրք՝ Թաւրիզի թ. 43, թղ. 122բ—124բ (ԺԶ: Աճառեան, Յուլ. Զմմառի, էջ 36): Ասկէ Աճառեան, Գանձարան, թղ. 168: Վենետիկ, Մխիթ. Մատ. Ա. Գանձարան, էջ 209:

Ըստ Հ. Մ. Պոտուրեանի (Բազմալէպ, 1907, էջ 61) թէ Վենետիկի Մխիթ. Մատենադարանի Ա. Գանձարանին եւ թէ 1899ին Պարսկաստանէն ի Ս. Ղազար հասած ուրիշ Գանձարանի մը գրիչները Կարապետ Բաղիշեցի անունը կը կրեն. վերջնոյս մէջ ի Ս. Պետրոս եւ Պաւլոս առաքելաւն երգուած Գանձին ետեւը գրուած է. «ԳԿարապետ գրչակս յիշեալ ըզԲաղիշեցի անմիտս». իսկ առաջնոյն մէջ Գրիգոր Աստուածարանին նուիրուած գանձին վերջը կ'ըսուի. «Ի գծողէս այսմ Գանձարանիս յանմիտ Կարապետէ Բաղիշեցոյ»<sup>13</sup>: Դժբախտաբար երկու ձեռագիրներս ալ անթուական են: Պոտուրեան գրչին դատելով երկուքին գրիչն ալ մի եւ նոյն անձը կը համարի: «Մեր Ա. Գանձարանէն գրիչեմ, կը գրէ Պոտուրեան, որ ինքը Կարապետ Բաղիշեցին տաղասաց է եւ զանձասաց. եւ սա Առաքել Բաղիշեցոյն բոլոր զանձերը հաւաքած եւ օրինակած ըլլալով կասկած կու տայ անոր աշակերտած ըլլալուն. որով ըստ ինքեան այս գրիչը ԺԶ. դարուն սկիզբը <ապրած> պէտք ենք համարել: Ս. Ղազարու Ա. Գանձարանին մէջ Կարապետ Բաղիշեցի ունի յիշեալ գանձն միայն եւ յաջորդ տաղը:

4. Տաղ վասն վարդին:  
Պուրկուլն է հագեր ի յօտըն կօշիկ,  
Չվարդն կու փնտոէ սիրով անուշիկ.  
Չայն է արձակեր, կու կանչէ վարդ, վարդ,  
վարդ, վարդ, դու գուարթ,  
ես պուրկուլ, դու վարդ:  
Վ. Կարապետ ծառայ, բնակարան մեղաց,  
Չպուրկուլն ընդ վարդին սակաւ մի գուրկաց:

Ձեռագիրք՝ Վիեննա, Մխիթ. Մատ. 405, 29ա—30ա: 514, 144բ: Թաւրիզ, Լիւրաւաթաղի Մատ. թ. 3, 34բ (ԺԹ., Յուլ. Զմմառի = Աճառեան, Տաղարան, 258ա):

Հրատարակուած՝ Գամառ-Քաթիլպա, Երզարան: Քնար հայկական, 246: Գիրք Դպրութեան եւ Տաղարան, 213—214: Կոստանտնուպոլիս, Նոր ժողովածու, Բ., 14—15 (1695ի Տաղարանէ): Հայերգ, 72—73:

<sup>13</sup> Նոր հայկական Բաղիշեցի, ընդ բառիւ Գանձարան:

<sup>11</sup> Սաղմոսարան ի ձեռագիրս Տարօնոյ:

Վիեննայի 405 կը կարգայ. «Կարապետ դպիր որ ծառայն մեղաց» . Բնար հայկական եւ Հայերդ ունին «Աւետիս տայիր ծառայն իմ մեղաց : Հ. Ղ. Ալիշան, Հայբուսակ, էջ 589 կը վերագրէ «Բաղիչեցի Կարապետի» :

5. Ողբ ի վերայ մեղաց եւ պաղատանք առ Աստուած ի Կարապետ վարդապետէ (Բաղիչեցու) :

Աստուած իմ Յիսուս Բրիտանոս,  
կենդանի եւ կենդանարար,  
Զիս կենդանացու հոգևով մեռեալ  
իմ մեղօք չարաչար...  
Վ. Քեզ փառք Աստուծոյ բանին,  
պատիւ տամ քեզ յօժարարար.  
Տուր ինձ բնութիւն բարի,  
զի օրհնեմք զքեզ մեղմարար :

Տունք՝ Ա—Ք :

Զեռագիրք՝ Երեւան, Պետ. Թանգարան, 359, 445ր (1623) : 361 : 364 : 365 : 385, 40ր (Ժէ) : էջմ. 282, 4. 68ա (1627. Թերի. հմմտ. Արարատ, 1895, էջ 124) : Պարիս, Bibl. nat. 283, 102ր : Վիեննա, Մխիթ. Մատ. 63, 16ա (Թերի) : Զեռ. Կերլայի, Թղ. 453ա = Վիեննա, Մխիթ. Մատ. 745, 293ա :

Սորագրերը Պարիսի 283ի համեմատ է. Վիեննայի Թ. 63 ունի «Ողբ ի վերայ մեղաց եւ նախատինք անձին եւ ապաշաւանք առ Աստուած» . իսկ էջմ. 282 պարզապէս՝ Տաղ Կարապետ վարդապետի Բաղիչեցույ :

6. (Սրատ գանձ երգելոյ) ի տէր Կարապետ վարդապետէ Բաղիչեցույ :

Թէ ձայն ունիս քաղցր եւ բարակ,  
Զգանձերս ասա դու համարձակ.  
Ապա թէ հաստ է եւ խառնակ,  
Յայսկից ի զատ կացիր յերակ...

Ընդ ամէնը 13 տուն :

Զեռագիրք՝ էջմ. 282 4., 72ա—73ա (1627) (հմմտ. Արարատ, էջ 126) : Երեւան, Պետ. Թանգարան 359, 3ր—4ա (1623), անանուն :

Հրատարակեց՝ Ն. Քարամեանց, Արարատ, 1895, էջ 130 :

Ն. Քարամեանց կը գրէ. «Այս ոտանաւորը յայտնապէս երկու մասից է բաղկացած. մի մասը, որ վերաբերում է գանձերն երգելուն եւ աւարտում է վեցերորդ տնով, երկու պատկանում է Կարապետ վարդապետին. իսկ վերջին մասը, որ վերաբերում է Գանձարանի գրքի գործածութեան, հեղինակութիւն է

Մարտիրոս գրչի : Երեւի Ղուկաս արեղան (գրիչը) այս մասը իւր օրինակում իրրեւ չարունակութիւն է գտել Կարապետ վարդապետի ոտանաւորի ու նրա անունն տակ էլ արտագրել է» (Արարատ, 1895, էջ 126) :

ՏԱՂ ԱՐԱՐԱԾՈՅ

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍՏՅԵԱԼ

Որ գովի բաժինն է Քամայ :

Եկայք Աղամայ որդիք,  
արարածք ամէն միարան,  
Օրհնեմք զարարիչն Աստուած,  
որ ստեղծեաց զէակս ամենայն.  
Որ ինքն է անեղ բնութիւնն,  
սուրբ Երրորդութիւն միական,  
Զարդարեաց իմաստութեամբ  
զբոլոր բնութիւնս ամենայն.  
Ստեղծեաց զԱղամ նախնին  
թաղաւոր՝ եւ եղ պատուիրան,  
Թէ յամէն ծառոց դու կեր,  
՛ւ ի պըտղոյն չունիս հըրաման :  
Օձն էր կորրստեան պատճառ,  
բանսարկուն էր առիթ մահուան.  
Սարեցին ըզձեռագործն  
եւ արին մահու գրաւական :  
Հրաման առին յարարչէն,  
եւ զբրին պատճառ շինութեան.  
Եւթանասուն ուստր եւ դուստր  
ծընան զնահապետքն զամենայն :  
Եւ հրաման ի յարարչէն,  
բաժանել զլեզուքն ամենայն.  
Ետ ամէն լեզուաց բաժին  
ի յաշխարհս չորեքանկեան :  
Ետ բաժին Քամայ ազգին,  
վիճակաւ գաւառք բազմական.

Ձեռնագիրք՝

A = Վիեննայի Մխիթ. Մատենադարանի Թ. 684, րդ. 64ր—74ր :

B = Վիեննայի Մխիթ. Մատենադարանի Թ. 745, րդ. 94ր—102ա (արտագրում Կերլայի Թ. 43 Տաղարանէն) :

Հրատարակուիւն՝ V = Բագմավէպ, 1880, էջ 97—100 :  
ԽՈՐԱԳԻՐ՝ Տաղ Արարածոց A. տաղ արարածոց. < երգի ի գոյն > Երազ է սուտ, եղբարք < տաղին > B. Կարապետ վարդապետի (1565) տաղ աշխարհացոյց զհեղեղի. V :

Ենթախորագիրը ունի միայն B :  
3 որ է ինքն V : բնութիւն BV : — 5 եւ V. պատվիրան B : — 6 ծառէ B. դու չիք V. պտղոյն միայն V : — 7 գալտեան A էր չիք A : — 9 շինութեանն A : — 10 4. (= եւթանասուն) AB չիք V. ուստրս եւ զբոլորս V : գնահապետքն BV. զամենեւեան ABV գրիւն գամենայն չափին համար : — 11 ելեալ V ի չիք V : — 12 լեզուաց A :

Յայտնի ՛ւ անծանօթ աշխարհք,  
զոր գիտակ է իմաստութեան :  
Նախ ըսկիզբն առնեմք նորա,  
որ քաղաքն է հիւսիսական.  
Բուխար ասեն նրմա,  
որ ելնէ սամուրք աննրման :  
Եւ այլ ի կարգի նորա,  
որ անկնի կողմ արեւելեան.  
Խաթայ ու Սուխայ ասեն,  
որ է թախտ ազգին Լակղըստեան :  
Եւ այլ է ընտիր աշխարհք,  
մեծամեծ քաղքունեայք որ կան.  
Բայիս ու Բաղաշխան ասեն,  
զոր բերեն զլաշուարդն ամենայն :  
Ելանք ընդդէմ գըրախտին,  
զոր մարդիկ անդ զըժար մըտան,  
Որ Զին ու Մաչին կոչի,  
որ կազմեն զեղթափ, շինխտան :  
Եւ այլ ի ներքին կողման,  
որ ասի Զորով Հընդուստան,  
Քարուլ, Ղանդահար ասեն,  
որ տիրեալ ազգին Հազարան :  
Ի յայնկոյս ծովուն միջին  
են բնակեալ լեզուք զանազան.  
Թախտ ունին զՊեճանակալն,  
որ ասի Սորու Հընդուստան :  
Լալ ու գոհարն անդ լինի,  
եւ քարինք անդին պատուական.  
Զոր բերեն մարդիկ յաշխարհս,  
թաղաւորքն ի վերայ ինդան :  
Են ազնիւ նախնեաց նոցին.  
վիճակաւ ազգն Եթովպական.  
Ետ Աստուած պարզեւք նոցա,  
ըզոսկին ազնիւ բուսական :  
Հաւատովն են քրիստոնեայք,  
եւ գործովք ուղղափառութեան.  
Ի Փիլիպպոսէ շնորհաց,  
որ ընտրեալ են ուղղազաւան :

14 անծանօթք B զոր զի B է] են իմաստութեանն A : — 15 նրմա B : — 16 կու ասեն V սամուրքն B : — 17 անկնի V. յարեւելեան A : — 18 խաթայ V. թաղաք A. լակղըստան B լակղըստան V : — 19 այն V. չիք է V ընդիր B աշխարհք] քաղաք B. քաղքունայք BV : — 20 բաշիս BV պատաշիս V զլաշուարդն B : — 21 Ելեմք V Ելաք B. լաշուարդ V աննման V : — 22 Ելեմք V մտաի գէմ B մարդիք B մարդիք V անդ չիք V մտանն V : — 22 եւ կազմեն զեղթափ V շինխտան V : — 23 այք B չորրորդ V հիւսիստան B հիւսիստան V : — 24 զանդահար V որ չիք V տիրեալ է V ազգ B : — 25 ծովին B բնակալք B : — 26 թախտ A զպէճանակալն V հիւսիստան B : — 27 զաֆարն A կոհար B զոհար V պատվական B : — 28 մարդիք BV թաղաւորք BV վրան V : — 29 ազգ V Եթովպական B : — 30 պարզեւք V : — 31 հաւատով BV քրիստոնեայք A : — 32 Փիլիպպոսէ A Փիլիպոսէ B Փիլիպպոսի V շնորհաց BV :

Եկայք որ մըտնունք յաշխարհն,  
որ է կողմն ի հարաւեան.  
Թախտ ունին նոքա զԹոնոզն,  
ի յաշխարհն Մըղրիպիստան :  
Յառաջն էին ձըկնակերք,  
եւ անկուշտ մարդաղէմ գաղան.  
Այժմ են խիստ քաջ բուամալք,  
եւ ազգաւ են մահմետական :  
Ի գըլիսի նոցին բընակեալ  
են Մաչրիպք, որ են Սուխաստան.  
Թախտ ունին ըզԿըրաւնատայ,  
վիճակաւ են Ամաղոհեան :  
Կինն է նոցա թաղաւոր,  
զոր ատեաց Մակեդոն արքայն :  
Սարաճ տան Փուլթուկալին,  
որ բնակեալ անդ Լեւիաթան :  
Նաւալարք խիստ քաջ գիտուն,  
որ առնեն զՀըրմուղ կըզգին այն :  
Հըրաման առնէ նա ծովուն,  
որ բնակեալ է Լեւիաթան :  
Յայտնեցին զոսկի քաներն,  
ի սինօրն Հապաշխտան :  
Մըտան ի Փէքրով քաղաք,  
տիրեցին բոլոր Հընդուստան :  
Ի ներքոյ հըքմի նոցին  
են բնակեալ սեւերք անթուական :  
Նապիք եւ Սիահք ասեն,  
Քաւթաքոյք աշխարհ հեռաստան :

Վեարեցաւ վիճակն Քամայ : Յայտնեալ վիճակն է Սեմայ :

Անեղ անըսկիզբն Աստուած,  
որ միշտ է ինքնն անսահման.  
Ետ վիճակ Սեմայ ազգին,  
եւ բաժին ըզձեռակըստան :  
Անդէն բընակեալ լեզուք,  
թաղաւորք արեւմըտական.

33 հարաւայեան BV : — 34 թաղիթ A թաւնոյ BV. աշխարհաւ են մարդիպատան V : — 36 բուամալ V : — 37 ի գըլիս BV մաչրիպք A մարդիպք B մաչրիպք V. որ է V : — 38 թախտ A զԿըրաւնայ V ամաղոհեան V : — 39 կին BV : — 40 փոթութեանն V. է անդրանդական V : — 41 BV ունին նախ տող V. է անդրանդական V : — 42 ապա 41 : ն. են քաջ V առին V զհըրմուղ B կըզգին A : — 42 առնեն այն ծ. V նոյ A : — 43 զոսկին V սինօրն V հապաշխտան B : — 44 փեքրով B փէքրով V քաղաքն V հիւսիստան B : — 45 հոքմի B հըքմի V բնակեալ են V սեւք B անթուական A անթուական BV : — 46 քաւթաքոյք V քաւթաքոյք B աշխարհք B :  
Ենթախորագիր՝ վիճակեցաւ A քամայ աշխարհն B պարզապէս վիճակ քամայ V տուր վիճակս ս. A :  
47 անեղական AB : — 48 բաժին B եւ չիք BV ըզվիճակն BV Փրանդխտան BV : — 49 անդ են V յարեւմըտական B :

50 Անթիւ 'ւ անհամար զօրօք,  
 ըսկիզբն են արիական:  
 Արժանատառանգ ունին  
 թագաւորըն ըՍպանիական.  
 Արքայից մեծաց թագաւոր,  
 զոր կազմեաց Սողոմոն արքայն:  
 Այժմ ինփառատուր է նա,  
 ինքունիդ աշխարհն ամենայն:  
 Հնազանդեցան թագաւորքն  
 55 Ի Լատին եւ մեծ Ալամեան:  
 Հարկատու զնա արարին,  
 ըզՎրնէժ, ըզՃենուայ եւ զԱնքունիայ.  
 Առին ըզՊոլոնիայ,  
 եւ հասին ի մեծըն Միլան:  
 ԸզՓարէզ քաղաք թախտ ունին,  
 մեծ կըղզին եւ Յիցիլայն:  
 Ինքըն վերկէ գըրիստոնեայքն,  
 Ի յազգէ այս մահմետական:  
 Եւ այլ ի կարգի նոցա  
 է բնակեալ ազգ Կատալիայն.  
 60 Թախտ ունին ըզՓրլանտայ,  
 որ ելնէ խաղինջայ չուխայն:  
 Ի կարգի նոցա անկնի  
 Սամարգին եւ ազգն Իմզացան,  
 2 որ Փուլիացիք ասեն,  
 որ յայտնի է Պանփիլայն:  
 Գըրուխ քըրիստոնէից,  
 քաղաքաց մայրն ըստուգական,  
 2 որ Հրոմ ասեն նրմա,  
 է աթոռ հայրապետական:  
 65 Անդ են բրնակեալ զըրուխք,  
 'ւ առաքեալքն որ վէժ կոչեցան:  
 Անթիւ քահանայք բազումք,  
 սպասաւորք եկեղեցական:  
 Եւ պապն ի նոցա միջին,  
 որ է զըրուխ թագաւորական:  
 Եպիսկոպոսունք ընտրեալք,  
 եւ երկոտասան կարտինայն

Կարգաւորք առաքինիք,  
 սուլտանայքն են խորհրդական:  
 70 Տիրեն մեծամեծ կըղզեաց,  
 որ Ֆրոանքն են նոցա պահապան:  
 Ամուր կըղզիք մեծամեծք,  
 Կըրխէս 'ւ Ակրականիայն:  
 Ըրոտոս, մեծըզ Կիւրոս,  
 ձեզ զըրուխ է Տաւպրոնիքայն:  
 Ի յԱթենացոց աշխարհն,  
 որ ասի Թեսաղոնիկայն,  
 75 Յըլարէնցան մեծ,  
 Ի քաղաքն Անապոլիսն այն:  
 Թագաւորէ աշխարհիս  
 Հըզօր Ֆըրանցայ արքայն.  
 Է սա ի թոռանց մեծաց,  
 Կոստանդեայ Կոստանդին արքայն:  
 Ի մուսս արեւու այլ կան  
 Ընկլուզու Ընկլըթեո արքայն.  
 Բընակեալ է ի յայն ծովին,  
 որ հանեն ըզՃըկան ակուայն:  
 Ի Բուլթանացոց աշխարհն  
 են բնակեալ լեղուք զանազան.  
 80 Մաճարք եւ Բուլղարք ասեն,  
 Լէհն ու Սէրֆն, Խըրաթն եւ Բուսնայն:  
 Իլախն եւ Ֆըլախն կան  
 Ի Գրադոփն աշխարհն ամենայն.  
 2 աշխարհքն ունին սեփհական,  
 որ հասնի մինչեւ յԱղբըրման:  
 Ի սառնամանիք հիւսիս  
 է ըմուզ ազգըն բընական:  
 Աշխարհն է նոցա Մոսկով,  
 մինչ ի ծովըն Կաղրիական:  
 85 Եւ ազգըն նոցա գերող  
 է թաթարըն նետաղական.  
 Լայն 'ւ արձակ անկեալ է նա,  
 որ հասնի մինչեւ ի Կաֆայն:

69 սուլթանայքն B սուլթանայք V: — 70 չիֆ որ Ֆրոանդ B են] է V չիֆ B: — 71 կըղզիք A մեծամեծ B ու B ակրականիան V: — 72 ըրոտոս B տօպրոնիայն B տօպրոնիքան V: — 73 թեսաղոնիկէ B թեսաղոնիկան V: — 74 Ֆըլարէնցաուան A Ֆըլարէնցաուան B Ֆրարէնցո Աւրոնիան V մեծ քաղաք V անապոլիս B: — 75 թագաւոր է V մեծ հզօր Ֆըրանցան B Ֆըրանցա V արքայն չիֆ B: — 76 է սա չիֆ V յաւիտեմ (մեծաց) թագաւոր B թագաւոր V արքայ B: — 77 անկլեզու V: — 78 է յայն B ծովուն V: — 79 բուլթանացոց A բնակեալ] անկեալ V: — 80 սոստանդեայ BV ուսէրֆ V խըրաթն BV սոստանդեայ BV: — 81 ի Ֆըլախն կայ A Ֆլախընկան V գրազով BV: — 82 զաշխարհն BV սեփական V հասնի A մինչ ի յԱղբըրման V աթիբըրման B: — 83 սառնամանիք B հիւսիսն V ուսուզ B ուսուս V: — 84 աշխարհքն V Կաղրիական V: — 85 ազգին V: — 86 եւ V անձակ B է ա. V չիֆ է նա V նայ A Կաֆան V:

50 'ւ չիֆ B են ըսկիզբն B 'ւ ըսկիզբնէ են V: — 51 ունի B թագաւոր V սպանիական A: — 53 այժմին փառաւոր էին V ինքունիք B ի բուսնէ V: — 54 հնազանդ եղեալ նմա V թագաւորք B ի չիֆ V ալամեան V: — 55 զնա չիֆ V ձէնէա B ձէնեայ V զանքունիայն V: — 56 ըզպօլոնիայ A ըզպօլոնիայ B միլայ B: — 57 թախտ A ունի V եւ զմեծ V ցիցիլան BV: — 58 յազգէս V: — 59 կատալիան B կատալեան V: — 60 թախտ A ըզՓրլանտայ A զՓրլանտայ BV ելնէ B ելնայ V զարինձայ BV չուխան B: — 61 անդնի A անկանի V իմըզան B նիցման V: — 62 փիլիպիք BV պանփոլիան V: — 63 որ է մայր նա B սրտուգական A: — 64 նմայ A: — 65 անդէն A անտ են B զըրուխ BV 'ի չիֆ BV: — 66 բազում V: — 67 թագաւորութեան V: — 68 կարտինայք B:

Գուրէլն ու Մէկրէլն յայտնին,  
 Ապաղայն եւ մեծ Դաղիայն:  
 Պաշաչուխն ի հեա նոցա,  
 որ ի կողմն է ի Վրացտան:

Այս գրուխս բուրնովին ազգ եւ ազինք, լեզուք եւ գաւառք, քաղաւորք եւ իշխանք, գոր յայտնի եղել ի Սեմայ անցեալք. հաւատով քրիստոնեայք. այսպէս միջին է Թաքար < որ հաւատով > է մահմետական: Յայսմեհտէ ի վերայ Արեքայ վիճակին է այս:

Երկնի եւ երկրի ստեղծող,  
 մարդասէր Աստուած ինքնական.  
 90 Արեթայ շնորհեաց վիճակ,  
 զմէջաւրեայ աշխարհս ամենայն:  
 Ըսկիզբն յԱսիայ առնեմք,  
 զոր շինեաց Կոստանդին արքայն,  
 Որ ինքն է օճեալ քաղաք,  
 եւ տեղիք սրբոց բընակարան:  
 Այժմ է նա կոխան եղեալ  
 այլազգեաց, որ յայտնի մեզ կան.  
 2 որ անուամբ Օաման կոչեն,  
 եւ տիրեն մինչեւ ի Մաքայն:  
 95 Տիրեն բոլոր աշխարհիս,  
 եւ ունին բուռն հըրաման:  
 Խըրոխտ են եւ քաջ գիտուն,  
 մինչ լինի ի տըրուզն վախճան:  
 Երաժիշտ թագաւորացիք,  
 զոր յայտնի այս է Ղարաման.  
 Եւ ի հեա Գաղատիայ,  
 զԿիլիկէ եւ ըզԲերիայն:  
 Փիւնիկեցիք, Ասորիք,  
 որ ազգաւ էք վաճառական:  
 100 Օրհնեալ է իմաստութիւնն,  
 որ շնորհեաց ըզթըւականըն.  
 Գայիրացիք հընարազէտք,  
 քաղաքաւ եղիպոսական.

87 գուրէլն BV մէկրէլն BV յայտնի B ապաղայն B ապաղան V լաւագոյնս՝ Ազիայից: ու V մեծ չիֆ V տախիայն B տատանիան V: — 88 պաշաչուխն V որ ի կողմն է ի Վրացտան V:

Ենթախտարգիրն՝ զըրուխ B ազգին B այսպէս] այսպարս B որ հաւատով աւելցուցինք. յօրինակին մէջ | | | | | (չմզուած) է. թաթարիտան մահմետական B: Յայսմէհտէ վիճակ է Արեթայ վրայ է այս A. օրհնեալ է Աստուած. ի զոյն Գալիթ արքային որ գին B. իսկ V ունի պարզապէս վճարեցաւ Սեմայ եւ մտանէ Յարեթայ V:

89 ստեղծող AB: — 91 սրկիզբն A ասիայ B յասիայ V: — 93 նա չիֆ A այլազգաց B այլազգացն V որ մեզ յ. կ. V: — 94 մաքան B: — 96 խըրոստ A ի չիֆ B վաճէան A վազման BV: — 97 թագաւորայն V: — 98 գաղատիայն V ըզԲերիան B: — 99 եւ ասորիք V են V: — 100 իմաստութեանն A իմաստութիւն B ըզպարս թվական BV: — 101 գահըրացիք V էք իպոսական A ք. են եղիպոսական:

Գրտեալ էք զուք զայն արուեստն,  
 որ կոչի երկրաչափական:  
 Ի յԱրարիա մըտաք,  
 որ հասնի մինչեւ ի Զիտայն,  
 Ունին թախտ զԵգիպոսս,  
 զԴամասկոս եւ զըՄըանդարիայն:  
 105 Ազգն Երբայեցոց անդ են,  
 'ւ Իսրայէլ անուն կոչեցան:  
 Աբրահամ եւ Իսահակ,  
 նահապետքըն երկոտասան:  
 Յայտնեցան ազգի նոցա  
 մարգարէքըն վըկայական.  
 Նոցանէ Աստուած ծընաւ,  
 ազատեաց զհոգիքն ամենայն:  
 Ով բարեւայիք գիտունք,  
 արուեստիւ աստղաբաշխական.  
 110 Գրտեալ էք զմոլորականքն,  
 եւ զընթացըս արեգական:  
 Աշխարհաւ էք զուք երաժշտական,  
 որ յայտնեաց Թարայ եւ Խառան.  
 Աբրահամ հայրն առաջին,  
 որ ըսկիզբն աստուածպաշտութեան:  
 Ի Բարեւոյնի կողմանցն  
 է Թայուխըն այն մեծ արքայն,  
 Ի աշխարհք եւ զաւառք բազում,  
 որ հասնի մինչեւ ի Քալալան:  
 115 Ի Մըքրին եւ ի Միջազեան  
 աշխարհն է Ասորեստան:  
 Եւ այլ ի կարգի նորա  
 զոր յայտնի ասեն Քուրդիստան:  
 Մեզ յայտնի է այն քաղաքն  
 որ շինեաց զըշխոյն Հեղինեայ.  
 Անուամբ կոչի նա Պուլուսայ.  
 որ ինքն է ազնիւ շահրիստան:  
 Եւ անտի յառաջ գըրով,  
 է Յունաց աշխարհն ամենայն.

102 գ. են նոքա զարուեստն V: — 103 յարարիայ AB մըտանէք BV ձիտան BV: — 104 թախտ A զթախտ եղիպոսս V ըզԵգիպոսս B Սկանտա-րիան B զԿամատարեայն V: — 105 անդէն A անտ B: — 107 ի յազգէ V: — 108 ի նոցանէ V 'ւ (ազատեայ) B: — 109 աստղաբաշխական A աստղաբաշխական B: — 111 (ազգաւ) աշխարհաւ A չիֆ B ուղղեցինք չափին համար. զուք էք BV երաշտական A որ] զըրուխ V: — 112 (ըսկիզբն) է B որ է ս. V աստուած-պարս V: — 113 ի բարեւի A բարեւոյնի V պաշտութեանն A: — 114 ի կարգի A բարեւի V: — 114 'ւ] եւ A բազում B 'ւ այլ ա. V եւ այլ գ. V ըզպարս չիֆ ABV քալալան BV: — 115 'ւ B Միջազեան V որ աշխարհս V: — 116 յ. է նայ B զըրուստան B քրթաստան V: — 117—118 չունի A 117 որ] գոր V հեղինայն V: — 118 շահրիստան V: — 119 եւ] է A անդի առաջ V:

120 Զոր այժմ Հոռոմք ասեն,  
 և սինոն է Սերաստիայն:  
 Ի յորդանխաղաց աշխարհք,  
 որ ասի Շիրան և Գիրան.  
 Խրոտումտան կրղզի միջին,  
 աշխարհ է Չանդալրատան:  
 Անդ լինի պարզեւք մարդկան,  
 պատուական 'ւ անգին մանանայն.  
 Զանունն աղբրում ասեն,  
 որ գործեն մահմուտ և չաթմայն:  
 125 Ըզաղզըն Պարսից յայտնեմք,  
 իմաստուն և քաջ գիտնականք.  
 Ճարտար և ճնարագէտք,  
 աշխարհաւ են Հատրբէջան.  
 Ի միջի նոցա շինեալ,  
 է գաւառք 'ւ աշխարհք զանազան.  
 Անդ լինի պողպատ սուսերք,  
 որ ասի Շիրազ և Բրման:  
 Արուեստիւ լըցեալ քաղքունեայք,  
 որ մըտնին ի քեզ բաղրբիան.  
 130 Յանուանէ կոչեալ լինիք,  
 զոր յայտնի էք Դում և Քաշան:  
 Պայծառ և ընտիր քաղքունեայք,  
 որ կոչիք էզո ու Ասպհան.  
 Պարարտ և խիտ վայելուչ,  
 աշխարհաւ էք երաժշտական:  
 Ագնիւ և անգին դումաշ,  
 որ լինի ի ձեզ գովական.  
 Զարդարանք և պաճուճանք,  
 աշխարհիս մարդկան մեծութեան:  
 135 Արշակունիք գովելիք,  
 և արեւելեան և ընտիրք.  
 Պալհաւ Հընդիկէ էք կոչեցեալք,  
 աշխարհաւ էք դուք Խորասան:  
 Տիրել և բազում քաղաք,  
 Թիլան մինչ ի Լարբատան,

120 կոչին B կոչեն V սինոն B սինուսն V սերաստիան V: — 121 ի չիք V յորդանխաղաց V աշխարհն B աշխարհքն V շիրան B շիրան V թիլան BV: — 122 միջին A աշխարհն B աշխարհքն V շիրան (չարին V) գալտանն BV: — 123 պատուական B մանայնայն A: — 124 աղբրում V մահմուտ B գործեն V չաթմայն A չաթմայն V: — 125 ըզաղզըն B գիտնական V: — 126 ճարագէտ V ևն չիք B ճարագէտն V: — 127 ճնարագէտ V ևն չիք B ճարագէտն V: — 128 անտ A պողպատ AB շիրան B քեթման BV: — 129 շինեալ քաղաք BV մրտան B մտան V ի ձեզ BV պողպտիկան B պողպտիկան V: — 131 'ւ ընդիր B ևն չիք BV ասպհանք V: — 132 աշխարհաւք B երաշտական BV: — 133 դումաշըն V: — 134 և գ. A զոր ճանին ի շինեալ ամենայն V: — 135 դուք մաքուր պայծառ և ընդիրք B և ընտիր ի յարեւելեան V: — 136 պալհաւ B ճնարագէտ A ճնարագէտ V էք չիք BV կոչեցեալ B կոչեցեալ V դուք էք B և դու V: — 137 տիրել BV ըզաղզըն BV մինչև Լարբատան B:

Երկրորդ ևս 'ւ ընկերակից,  
 Թորգոմայ ազգիս հայկազան:  
 Ունիս դու բազում հեծել,  
 կրուարար և քաջ փահլաւան.  
 140 Սըմբրղանդ է քո սինոն,  
 որ է գլուխ քաղաք պատուական:  
 Արշակ է շինեալ ըզքեզ,  
 թագաւորն ճրապաշտ արքայն.  
 Եւ է նա Քեռուրացի,  
 զոր յայտնի է ձեզ յանդիման:  
 Բըննեցուք զհայկական որդիքն,  
 մէջ ամէն ազգի ցիր և ցան:  
 145 Ազգաւ մեք Արմէն կոչիմք,  
 վիճակաւ ևմք թորգոմական:  
 Քաջն Արշակ և Վաղարշակ,  
 հարազատ եղբարք միական.  
 Երկրքեանն սիրուն եղբարք,  
 կրուարար և քաջ փահլաւան.  
 Եւ էին դայեակ որդիք  
 արքային այն Մակեդոնեան:  
 Դեղաւ զնա մահացուցին,  
 և առին դոտունն արեւելեան:  
 Վաղարշակ շինեաց գաւառ,  
 որ ասի նա Այրարատեան.  
 150 Բազում աշխարհք և գաւառք,  
 և Թաւրէզըն մեծ շահաստան.  
 Գովելիք և անուանիք,  
 ըսկիզբնէ մինչ ի յաւիտեան.  
 Ով ոք ձեզ նըման չեղաւ,  
 ոչ յառաջն և ոչ յապագայն:  
 Սուա և անցաւոր աշխարհ,  
 ո՞ւր են մեր իշխանքն ամենայն,  
 Տըրգատըն հըզօր արքայն,  
 պարոնայքն ընդ քեզ գովական:

138 թորգով A ազգին V: — 139 կրուարար B քաջ] յոյժ V փահլաւան V: — 140 սըմբրղանդ է քեզ B սմբրղանդ V սինուսն V գլուխ A պատուական B: — 141 է չիք A արշակն V թագաւոր V: — 142 քեռուրացի V է մեզ անդիման V: — 143 որդիքն չիք B զհայկաց ո. V որ ամէն ազգի են A յամէն ազգէն V ազգաց B ցիր ու ցան V: — 144 մեք չիք A արամ B որ ազգաւ արմէն կոչեն V են V: — 145 հարազատ A: — 146 եղբարք A: Այս տողը չունին BV. իսկ V փոխարէն ունին.  
 Են Արբաճաճու որդիք,  
 ի ճնրնդոցն քեռուրական:  
 148 դեղով B գնայ A: Ընդ մէջ 147 և 148 տողերու ունի B.  
 Բազմացան անթիւ դօրօք  
 և սինոնայն աշխարհ ամենայն:  
 149 գաւառն V նալ AB: — 150 և թագաւորն ձեռք շ. B և զՊաւրէզ մեծըն շ. V: — 151—152 ունի V 154էն վերջը: — 151 ի սկզբանէ V ըսկիզբնէ A: — 152 ով] ոչ V եղաւ V ապագայն V: — 153—164 իրբել առանձին տող հրատարակուած է Հայ էջեր էջ 13 = T: — 154 հըզօր մեծ Տըրգատ արքայն BT ընդ քեզ] հետ իւր V և իւր T:

155 Զարթիք և տեսէք ձեզ խեղճ,  
 և ողորմըն կըսկըծական.  
 Ամէն ազգ յիւրեանց վիճակն,  
 և եղեալ ևմք մեք ցիր և ցան:  
 Գերի ևմք ողորմելի,  
 և ամէն ազգաց ևմք կոխան.  
 Ոչ ունիմք մեք թագաւոր,  
 ոչ հըզօր զինուոր զօրական:  
 Ու՞ր են առաջին իշխանքն,  
 Քաջ Մուշեղ և Գայլըն Վահան,  
 160 Պատերազմին մեք համար,  
 'ւ ազատեն զերեւելքն ամենայն:  
 Վըկայեալք են հայրապետք,  
 և ուխտիւք միխթարական.  
 Լինի ձեզ ազատութիւն  
 ի յազգէն այն արիական:  
 Փառք քեզ թագաւոր փառաց,  
 որ քըննող ևս գաղտնեաց մարդկան.  
 Տըւեալ ևս իմաստութիւն,  
 և գատես զազգս որդւոց մարդկան:  
 165 Ի թըւին Հայոց ազգիս,  
 Տէր քըննէ մինչև յաւիտեան.  
 Ինընհարիւր և ութսուն  
 ինն թիւ այլ ի հետ նորայն:  
 Ով ողորմելի Կարապետ  
 Վարդապետ և խիտ անպիտան.  
 Հըզարա ևս և անամօթ,  
 Բանիս ով ևս քեզ հըրաման:  
 Ազաչեմք զձեզ եղբարք,  
 որ երգէք կարգաւը զայս բան.  
 170 Յիշեցէք ըզանարժանս,  
 ողորմի ձեզ Տէրն յաւիտեան:

155 զձեզ B զմեզ T զմեր V խեղճն V ողորմ AV կըսկըծական A: — 156 իւրեանց BT իւր V ցիրուցան T: — 157 'ւ ողորմելիք V: — 158 թագաւորք V զինուոր A զինուորք BV: — 160 զզերեւելքն V: Ընդ մէջ 160 և 161ի T չորս տող յաւելուած ունին: — 161 վըկայեալք են հայրապետքն BVT միխթարական V: — 162 թէ լինի V ազատութիւնն A: — 163—164 T ունի հոս տող մը յաւելուած. իսկ Tի C օրինակը՝ տ. 164: — 164 որդոց A որ քըննեն (քննեն V) զէական ամենայն BVC: — 165 ազգի V մինչ ի V: — 166 և չիք A հայրաւ և B, ի ապրիլի Ին լման V: — 167 ով չիք BV: — 169 ազաչեմ B եղբարք A զուք զայս V: չոս կ'ընդհատի A բուրք ինկած ըլլալով:  
 170 Այս տողով կ'աւարտի V:  
 B կը շարունակէ այսպէս, յայտնապէս Փանոս և Յակոբ գրիչներու յաւելուած.  
 Գերի 'ւ անպիտան Փանոս  
 զիպեցայ բանիս պատուական.  
 Գրեցի ի քարտի խոնամ,  
 թէ լինի ինձ աւուրն յիշման:  
 Եւ ևս անարժան Յակոբ,  
 ցանկացայ տաղիս գովական.  
 Եւ կըմարտեցի ըզայս,  
 թէ ասեն ինձ ըզայր մեզան.

Եղանակեցէք զայս բան,  
 կարգաւ է ևս յոյժ պատուական.  
 Տունըս համարով նըսուն,  
 և է սա բան իմաստութեան:  
 2.  
**ՈՂԲ Ի ՎԵՐԱՅ ԱՐՇԱՒԱՆԱՅ ՇԱՀ ԻՍՍԱՅԷԼԻ**  
 Փառք անեղին աստուածութեան,  
 որ անսկիզբն և անվաղճան,  
 էր միշտ և է առանց թուական,  
 չունի սպառումըն կատարման:  
 Զգեաց զերկինս որպէս վըրան,  
 և հաստատեաց առանց հիման.  
 Եւ գլուսաւորըն բազմազան,  
 առանց ուրուք միշտ ընթանան:  
 5 Զհընչուակս յերկինս եղ փառարան,  
 զմարդիկ յերկիրս գործական.  
 Պատճառ լինին աստ շինութեան,  
 մինչև մահուամբ ի հող դառնան:  
 Յորոց և մինն և անպիտան,  
 Բազիչեցիս տեղեալ ընական,  
 Եւ կարապետ կոչն իմ անուան,  
 ի սուրբ գործոց զիրի և ունայն:  
 Բանդի գործովս ևմ անարժան,  
 և զձեւն ունիմ արեղութեան.  
 10 Դարձայ մեղաց ըշտեմարան,  
 Աստուծոյ ի՞նչ տամ պատասխան:  
 Զերգըս Դաւթի յոյժ գովական,  
 որ ևս կոչի Սաղմոսարան,  
 Զհանուրց մանկանց սա վարժարան,  
 յաստուածային բանս պիտութեան:  
 Այլ ևս զաղաւթըս խորհըրդեան,  
 փրկչին մերոյ մարմնոյ 'ւ արեան,  
 Պատարագին մեր փրկութեան,  
 որ ի խաչին ըզմեղս ետպան:  
 15 Եւ զաղաւթըն հանրական,  
 և զքարոզից ժամադրական,  
 Զոր հայրապետք մեր սըրբազան  
 վասն աղաւթից եղին սահման:  
 Եղև սա զի՞ծ իմում մատան,  
 և անարեւտ զոլ զըրջութեան.  
 Հըրչակաւոր վասն գովական,  
 որ Եզրըրուտ կոչն իւր անուան:  
 Որ ի սահմանս է Տարանեան,  
 զեփրատ ունի իւր յանդիման.

171 պատուական B:

20 Դիմահայեաց արեւելեան,  
 եւ յահեկէ ըզՄուշն աւան:  
 Ի ԺԹ. թիւն յորելեան,  
 եւ աւելորդն երկոտասան.  
 Յունիս ամսոյն ի յաւարտման,  
 եղև զըրաւըս գըրչական:  
 Ի ժամանակըս չարութեան,  
 որպէս պատմէ Աւետարան,  
 Բանդի բաղում անձըն մարդկան,  
 որ մեռելոցըն ցանկանան:  
 25 Բանդի բաժակըն բարկութեան,  
 Բարեւաջոյ ժանդին նըման,  
 Նա մին ազգին Իսրայելեան,  
 սա ընդհանուր սեռից մարդկան:  
 Շահ Իսմայիլ այժմոյս իշխան,  
 յԱրտաւելու քաղքէն ելան.  
 Եւ տիրեցին երկրի լըման,  
 Միջագետաց եւ Սորասան:  
 Որ եւ յայտնի եղ իւր նըշան,  
 զխոյրըն կարմիր, սուր եւ երկայն,  
 30 Եւ թարկս ունի երկոտասան,  
 եւ Ղըզըլպաշ կոչի ազգն այն:  
 Որք ընդ յառնելն ի մարտ մըտան,  
 զԱլւանդն արին փախըստական.  
 Զօրքն ամենայն անդ ջընջեցան,  
 Ալւանդն յԱմիթ առ ըզվաղձան:  
 Երբ յաղթեցին եւ զաւրացան,  
 եւ բըռնութեամբ զթաղթըն կալան,  
 Եւ արձակեալ յոյժ լայնացան,  
 եւ բարձրացան լերանց նըման:  
 35 Եւ արեւելքը Սուստաստան,  
 ազգըն Պարսից եւ Քրդաստան,  
 Սեռք եւ ծընունդքըն Թորդոմեան,  
 միահամուռ մահմետական:  
 Որք որ կամայ եւ յակամայ,  
 զօրէնան իւրեանց զհինն ուրացան.  
 Եւ նորագոյն աւրէնս ուսան,  
 Իսմայելին հնազանդեցան:  
 Եւ յամենայն կողմանն որ կան,  
 որք ի մաւտ 'ւ ի հեռաստան,  
 40 Առին զնորայն եղեալ նըշան,  
 եւ ի յանձինս իւրեանց զգեցան:  
 Եւ այս են ամք երկոտասան,  
 որ միջոցիս այս տիրացան.  
 Եւ կարգ առեալ ըզհետ գընան,  
 ջընջեն զներհակն եւ տիրանան:  
 Եւ որք ներհակ կացին եւ կան,  
 յիշխանական փառացն անկան.

Բազումք ի սուրըս մաշեցան,  
 եւ այլք անգլուտ վըտարեցան:  
 45 Ոչ խընայեն յազգըս մարդկան,  
 եւ ոչ ներեն եւ թուլանան.  
 Ոչ ողորմին տըղայ մանկան,  
 եւ ոչ յալիս ծերոց զըթան:  
 Այլ են բնութեամբ որպէս գազան,  
 եւ ծարաւիք գոլով արեան.  
 Զըրոր աշխարհըս դամենայն,  
 առին յաւար եւ ի թալան:  
 Եւ այժմ իջին ի Քրդաստան,  
 պատեալ զԲաղէշ բերին յառման.  
 50 Եւ զայլ զըղեակն որ ի շուրջ կան,  
 յիսմայելի զաւրացն առան:  
 Նախ քան ըզգալ զաւրաց շահին,  
 ազգըն Մարաց ամբարտաւան,  
 Զերկիրս բոլոր հըրդեհեցին,  
 ոչ չն թողին եւ ոչ աւան:  
 Եւ զկողոպուտ երկրիս առին,  
 զառ եւ զաւար եւ ըզթալան,  
 Զչորքոտանիս ժողովեցին,  
 զիւր եւ ըզմեղր եւ ըզցօրեան:  
 55 Լըցին զամբոցս իւրեանց ի լի,  
 ամբարեցին որպէս մառան.  
 Ի ի գալ զաւրացըն թըշնամեաց,  
 ելեալ ի բերդքն եւ ամբացան:  
 Ոչ նայելով զկաման Աստուծոյ,  
 զործոց իւրեանց եղեն հաւան.  
 Զբանըն Դաւթի մարդարէին  
 առ ի յոչինչ համարեցան.  
 Որ նախատէ միշտ զայնպիսին  
 եւ համարի որպէս զանբան.  
 60 Եթէ ոչ Տէր պահէ զքաղաք,  
 մատնին պահողքն ի դատաստան:  
 Եւ յորժամ եկ զօրքըն շահին,  
 եւ ժամանակն էր ձըմըռան,  
 Կրկին պատիժ էհաս Հայոց,  
 բազումք ի ձիւնըն մըսեցան:  
 Ես ոչ կարեմ գըրել ի դիրս,  
 ըզպատուհասս որ զիպեցան,  
 Զի ամենայն անձըն խընդրէր  
 մահու տապան եւ գերեզման:  
 65 Պիտէր այժմոյս Երեմիայ,  
 շատ ողբասացք եւ լալական.  
 Զի ողբային զազգըս Հայոց,  
 որ յայսպիսի զըրուեն հասան:  
 Զգեցին զերկիրս ի պահանջման,  
 եւ հարկս առնուն առանց սահման.

48 աշխարհըս: — 54 ցօրէան:

28 ի խորասան:

Երկիրս եղև որպէս խոպան,  
 եւ ամենայն անձն ի դողման:  
 Այսպէս եւ մեք եմք ի տանջման,  
 ընդ ազգիս Հայոց թըշուառական.  
 70 Զի յամէն աւր որ լուսանան,  
 միշտ պահանջողքըն կան եւ դան:  
 Ոմանք առեալ յետս ընթանան,  
 ոմանք նըստեալ առնուն յաման.  
 Եւ ոմանք նոր բերեն նըշան,  
 խնդրեն ցօրեան եւ դահեկան:  
 Աշխարհս եղև յոյժ ցիր եւ ցան,  
 ի ստացուածոց աղքատացան.  
 Ինչըք բազմաց զընաց թալան,  
 եւ են բազումք որ գերեցան:  
 75 Ի յայսմ ամի թըշուառութեան  
 կամք որպէս նաւ ի յերեմման.  
 Բընաւ չունիմք հանդըստարան,  
 այլ հողմահար եմք ի դողման:  
 Կամք իբր ալի ծովու շարժման,  
 տարաբերիմք անկայական.  
 Իբրեւ ըզջուր գետոց հոսման,  
 որ վըտարեալ յետս ոչ դառնան:  
 Համբաւ շահին տարածեցան,  
 ի չորս անկիւնս երկրի հասան,  
 80 Ի յարեւմուտս ի Փոսնդըստան,  
 եւ յարեւելս ի Հընդուստան:  
 Եւ թաղաւորք երկրի դողան,  
 կան ի յերկիւղ եւ ի սասան.  
 Ընծայարեբք լինին եւ դան,  
 զի ազատման արժանանան:  
 Ոմանք պատիւ առեալ դառնան,  
 'ւ օր ըստ օրէ յոյժ մեծանան.  
 Ոմանք յերկաթ 'ւ ի բանտս եղան,  
 կան ի կապան եւ ի զընդան:  
 85 Բազմաց զըլուին յանձանց բարձան,  
 տունքն ի հիմանց տապալեցան.  
 Եւ ըստացուածքըն մարմեական,  
 ի թըշնամեաց զօրացն առան:  
 Աղէկսանդրու եղև նըման,  
 բախտի ծընունդ յաջողարան,  
 Զոր իմաստունն եկիպտացի  
 զիտեաց ըզժամըն ծընըղեան:  
 Եւ ես ըզսա նոյնպէս կարծեմ,  
 բարի ժամու գոլ ի ծընըղեան.  
 90 Որով յաղթէ միշտ թըշնամեացն,  
 եւ զհակառակսն առնէ խափան:  
 Զոր տնաւրինիչն ամենայնի,  
 ստեղծաւզ գոյիցս Աստուածըն բան,

Զինչ որ կամի այնպէս առնէ,  
 եւ մեք լինիմք ի հիացման:  
 Կամ ըստ մեղաց մերոց յարոյց,  
 որով դատէ զամենեսեան,  
 Սերմանողին պարտ է հընձել,  
 զոր սերմանեացն առնուլ զփոխան:  
 95 Որպէս ի հնուան Իսրայելի  
 դատէր զաշխարհըն Հըէաստան,  
 Երբ յաւրինաց ելանէին,  
 մատնէր ի սուր 'ւ ի գերութեան:  
 Նոյնպէս եւ այս մեզ հանդիպեցաւ,  
 վասըն գործոց մեր չարութեան,  
 Որով ունիմք եւ ոչ պահեմք,  
 վասն այն եւ մեզ պատահեցան:  
 Զի քրիստոնեայ եմք անուանեալ,  
 'ւ յայլ վեհագոյն գերաստիճան,  
 100 Ի աշխարհական գործով չըրջիմք,  
 որպէս զկայէն եղբայրատոյն:  
 Այս յիրաւի մեղ պատահի,  
 արդար է Տէր ի դատաստան,  
 Որ մերձակայն է իմանայ,  
 մըտօքն իւրովք լինի հաւան:  
 Զի որ ի մէնջ է ի ծածուկ,  
 նըմա յայտնի է եւ պեան.  
 Տայ ըզպատիժ պատուհասին,  
 առ հասարակ որդւոց մարդկան:  
 105 Ոչ որոշէ զչարսն ի բարեաց,  
 'ւ յանցաւորացըն տայ միայն.  
 Ամենեցուն արբուցանէ  
 մեզ ըզբաժակըն բարկութեան:  
 Որպէս զանձրեւ եւ ըզպարեւ,  
 առ հասարակ ծագէ մարդկան,  
 Եւ պիտանի բոյսք եւ անպէտք,  
 արբեան ըզջուրըն յառողման:  
 Կամ որպէս խանձ զիցեն մայրեաց,  
 հըրդեհ է շամբըս եղեգան.  
 Զորք եւ զալարք ի միասին  
 վառին ի հուր մինչ ի վաղձան:  
 Այժմիկ աւարտ առնեմ բանիս,  
 զի ընթերցողքն ոչ նեղանան,  
 Կամ անպատեհ բանըս խօսին  
 խոթու սըրտիւ եւ ձանձրանան:  
 Յինըն հարիւր Հայոց թվական,  
 վաթսուն երկու թիւն յաւելեան,  
 Աստ զըրեցի սակաւ զայս բան,  
 սպագայիցըզ ծանուցման:  
 108 անպետք: — 110 հար:

